



Ժողովրդավարության  
զարգացման  
հիմնադրամ



CIVIL YOUTH CENTER



ՀՀ Տավուշի մարզում 2024թ. մայիսի  
25-26-ը տեղացած հորդառատ  
անձրևներով պայմանավորված  
հեղեղումներից տուժած անձանց  
սոցիալական աջակցության և  
փոխհատուցման պետական  
ծրագրերի մոնիտորինգի

**ԶԵԿՈՒՅՑ**

**2025թ**

Զեկույցը պատրաստվել է «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն համայնքային զարգացման ՀԿ-ի կողմից Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի աջակցությամբ: Զեկույցում տեղ գտած կարծիքները և տեսակետները կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Փորձագետ և զեկույցի հեղինակ՝ Արփինե Երիցյան  
@Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման կենտրոն ՀԿ  
[www.cyc.org.am](http://www.cyc.org.am)  
Երևան, 2025թ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                                                                                                               |    |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....                                                                                                                                                                                                             | 3  |
| ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ .....                                                                                                                                                                                             | 4  |
| ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....                                                                                                                                                                                     | 7  |
| ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ .....                                                                                                                                                                              | 9  |
| ՋՐՀԵՂԵՂԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ .....                                                                                                  | 20 |
| Իրավական կարգավորումներ .....                                                                                                                                                                                                 | 20 |
| ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության ծրագիր .....                                                    | 21 |
| Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման ծրագիր ..... | 25 |
| ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում տնտեսվարողներին աջակցության ծրագիր .....                                                                           | 29 |
| ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում, բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման ծրագիր .....                                 | 33 |
| ԲԱՑԱՀԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....                                                                                                                                                                                      | 35 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....                                                                                                                                                                                           | 40 |

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

|                |                                                                         |
|----------------|-------------------------------------------------------------------------|
| ԱԶԲ            | Ասիական զարգացման բանկ                                                  |
| ԱՌՆ            | Ադետների ռիսկի նախապատրաստում                                           |
| ԱՊՊԱ           | Ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր պատասխանատվության ապահովագրություն |
| ԱՍՀՆ           | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն                           |
| ԵՄ             | Եվրոպական միություն                                                     |
| ԷՆ             | Էկոնոմիկայի նախարարություն                                              |
| ՀԲ             | Համաշխարհային բանկ                                                      |
| ՀՀ             | Հայաստանի Հանրապետություն                                               |
| ՀԿԳԳ           | Հետադետային կարիքների գնահատման գործընթաց                               |
| ՄՄԾ            | Միասնական սոցիալական ծառայություն                                       |
| ՄԱԶԾ<br>(UNDP) | Միավորված ազգերի զարգացման ծրագիր (ՄԱԿ)                                 |
| ՆԳՆ            | Ներքին գործերի նախարարություն                                           |
| ՏԿԵՆ           | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն               |
| ՇՀԶԳ           | Շվեյցարիայի համագործակցության և զարգացման գործակալություն               |

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

2024թ. մայիսի 25-26-ը Հայաստանում տեղացած հորդառատ անձրևները հանգեցրեցին Դեբետ, Աղստև և Տաշիր գետերի աննախադեպ վարարումներին, ինչի հետևանքով գետի՝ շուրջ երկու մետրով մակարդակի բարձրացումը հանգեցրեց գետափնյա մի շարք տարածքների լրջագույն հեղեղումներին: Աղետի կենտրոնում հայտնվեցին ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի մի շարք բնակավայրեր, որոնց էական հումանիտար և նյութական վնաս հասցվեց, եղան մարդկային զոհեր, ավերվեցին ենթակառուցվածքներ (ճանապահներ, կամուրջներ), շենքեր, շինություններ, տեխնիկա, անշարժ գույք և այլն: Աղետի օրերին փրկարար ծառայության կողմից տուժած մարզերի տարբեր հատվածներից դուրս են բերվել 2.382 քաղաքացի, արձանագրվել է 4 մարդկային զոհ:

Ի պատասխան հեղեղումներով պայմանավորված արտակարգ իրավիճակին՝ ՀՀ Կառավարությունը Լոռու և Տավուշի մարզերի 9 համայնք հայտարարեց որպես աղետի գոտի, որոնցից 3-ը Տավուշի մարզում, 6-ը՝ Լոռիում<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ աղետի գոտին ընդգրկել է 39 բնակավայր, որոնցից առավելապես տուժել են Ալավերդին, Թումանյանը, Գյուլագարակը, Փամբակը, Ստեփանավանը, Տաշիրը, Դիլիջանը, Իջևանը և Նոյեմբերյանը:

**Աղյուսակ 1.** Հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի աղետի գոտիները

| Համայնք                               | Աղետի գոտու տարածք                                                                                                                         |
|---------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ՀՀ Լոռու մարզ,<br>Թումանյան համայնք   | Թումանյան քաղաք                                                                                                                            |
| ՀՀ Լոռու մարզ,<br>Փամբակ համայնք      | Չորագետ և Վահագնաձոր գյուղեր                                                                                                               |
| ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի<br>համայնք    | Ալավերդի քաղաք, Ախթալա քաղաք, Շամլուղ քաղաք, Ախթալա, Բենդիկ, Թեղուտ, Հաղպատ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շնող, Փոքր Այրում, Քարկուփ գյուղեր |
| ՀՀ Լոռու մարզ,<br>Տաշիր համայնք       | Տաշիր քաղաք և Դաշտաղեմ, Մեծավան, Նորաշեն, Սարատովկա գյուղեր                                                                                |
| ՀՀ Լոռու մարզ,<br>Ստեփանավան համայնք  | Ստեփանավան քաղաք                                                                                                                           |
| ՀՀ Լոռու մարզ,<br>Գյուլագարակ համայնք | Ամրակից և Հոբարձի գյուղեր                                                                                                                  |

<sup>1</sup> ՀՀ Կառավարության 27 մայիսի, 2024թ. N 772-Ն, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=193246>

|                                         |                                                                                   |
|-----------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|
| ՀՀ Տավուշի մարզ,<br>Դիլիջան համայնք     | Դիլիջան քաղաք և Հաղարծին գյուղ                                                    |
| ՀՀ Տավուշի մարզ,<br>Իջևան համայնք       | Իջևան քաղաք, Աչաջուր, Գանձաքար, Գետահովիտ, Դիտավան,<br>Լուսաձոր, Խաշթառակ գյուղեր |
| ՀՀ Տավուշի մարզ,<br>Նոյեմբերյան համայնք | Այրում քաղաք, Արձիս, Բագրատաշեն, Դեբեդավան, Հաղթանակ,<br>Պտղավան գյուղեր          |

ՀՀ Կառավարությունը, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, իրականացրել է արագ արձագանքման և հետադետային վնասների վերացման մի շարք աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ Կառավարության նախաձեռնությամբ իրականացվել են հետադետային կարիքների գնահատման աշխատանքներ՝ արձանագրելու հեղեղումների հետևանքով մասնավոր և հանրային ունեցվածքին պատճառված կորստի ու վնասի չափը, գնահատելու տնտեսության վրա թողած ազդեցությունը և հետադետային վերականգնման համար պահանջվող ծախսը: Գնահատումը իրականացվել է համագործակցելով ՄԱԿ-ի (ՄԱԶԾ համակարգմամբ) և ԵՄ-ի հետ՝ այլ ազգային և միջազգային գործընկերների մասնակցությամբ:
2. Աղետի գոտիների տարածքներում բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումների կազմակերպման նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ձևավորվել է միջգերատեսչական օպերատիվ աշխատանքային խումբ, որը ղեկավարել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (այսուհետ՝ ՏԿԵ) նախարար՝ Գնել Սանոսյանը<sup>2</sup>: Բացի վերոնշյալ աշխատանքային խմբից, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման աշխատանքները իրականացրել են նաև հանրապետական, մարզային և համայնքային հանձնաժողովները, իսկ գործընթացը վերահսկող գերակա մարմին է հանդիսացել ՀՀ Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ): Հանձնաժողովներն իրենց գործառնությունները իրականացրել են առաջնորդվելով ՀՀ Կառավարության «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» 10 նոյեմբերի, 2011թ. թիվ 1582-Ն որոշմամբ:
3. Արագ արձագանքման միջոցառումների շրջանակներում իրականացվել են փրկարարական և վերականգնողական աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ջրհեղեղից տուժած անձանց տարահանմանը, նրանց կենսական կարիքների

<sup>2</sup> ՀՀ վարչապետի 2024թ., մայիսի 26-ի N 492-Ս որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193255>

բավարարմանը՝ սննդի, մաքուր ջրի, բժշկական օգնության տրամադրում, ինչպես նաև՝ ժամանակավոր կացարանների տրամադրում: Ընդհանուր առմամբ, փրկարարա-որոնողական աշխատանքներում ներգրավված է եղել 1809 մարդ, որոնք բաշխված են եղել 136 թիմերի և 42 օպերատիվ խմբերի:

4. Մշակվել և գործարկվել են ջրհեղեղի հետևանքների վերացմանն ուղղված պետական միջոցառումների ծրագրեր, որոնք թիրախավորել են ջրհեղեղից տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց: Իրականացվել են նաև աշխատանքներ ենթակառուցվածքների վերականգնման համար, խոսքը առավելապես փլուզված ճանապարհների, կամուրջների և հանրային շենքերի վերականգնման մասին է:

Պետության արձագանքման ծրագրերը իրականացվել են միջազգային մի շարք կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Համայնքներին աջակցություն ցուցաբերած կազմակերպություններից են Եվրոպական միությունը (ԵՄ), Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), Շվեդարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ՇՀՀԳ), Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) և այլն:

Չնայած անհամեմատ որակյալ և ամբողջական տեղեկատվությանը հետադետային կարիքների գնահատման արդյունքների վերաբերյալ, ինչը մեծապես առնչվում է UNDP-ի կողմից այս ոլորտում իրականացրած աշխատանքների հետ<sup>3</sup>, առկա է հանրային տեղեկատվության զգալի պակաս ջրհեղեղի հետևանքների վերացման պետական ծրագրերի վերաբերյալ, ինչը հանգեցնում է պետական ծրագրերի թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի նվազեցմանը: Ծրագրերի առաջընթացի վերաբերյալ հատվածական այն տեղեկատվությունը, որը տրամադրվել և շարունակում է տրամադրվել հաղորդակցության պաշտոնական խողովակներով, այնպես էլ՝ լրագրողական առանձին հրապարակումների միջոցով, հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել պետական աջակցության և փոխհատուցման ծրագրերի ծավալի, շահառուների քանակի վերաբերյալ, գնահատել հետադետային վերականգնման միջոցառումների արդյունավետությունն ու հասցեականությունը: Ավելին, մինչ այսօր չեն իրականացվել ջրհեղեղի հետևանքների վերացմանն ուղղված պետական արձագանքման աշխատանքների վերաբերյալ հանրային կարծիքի ու վերաբերմունքի ուսումնասիրություններ, ինչը ևս կարող էր որոշակի լույս սփռել կատարված աշխատանքների որակի ու արդյունավետության վրա:

<sup>3</sup> Armenia floods, may 2024, post-disaster need assessment report, 2024

***Ուսումնասիրության նպատակ***

Այս մոնիտորինգի նպատակն է եղել բացահայտել 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով Տավուշի մարզում իրականացրած սոցիալական աջակցության և վնասների փոխհատուցման ծրագրերի արդյունավետությունը:

Մասնավորապես ուսումնասիրության **առարկա** են հանդիսացել.

1. Ռիսկերի բացահայտման, կանխման և կանխարգելման, ինչպես նաև՝ արտակարգ իրավիճակներին պետական, մարզային և տեղական ինքնակառավարման համակարգերի պատրաստվածության որակը:
2. Արձագանքման և հետադետային վերականգնման համար իրականացրած աշխատանքների որակը և հասցեականությունը:
3. Սոցիալական աջակցության և փոխհատուցման ծրագրերի հանրային հաշվետվողականության և թափանցիկության որակը:

***Մեթոդներ***

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման հետևյալ որակական մեթոդները.

***Փաստաթղթերի ուսումնասիրություն***

- ՀՀ Կառավարության, մարզային և համայնքային իշխանությունների կողմից ընդունված որոշումների, կարգերի, փոխհատուցման ու աջակցության պետական ծրագրերի ուսումնասիրություն:
- Ծրագրի թիրախ հանդիսացող համայնքներից, մարզային իշխանություններից, ինչպես նաև՝ հետադետային վնասների փոխհատուցման աշխատանքների իրականացման համար պատասխանատու պետական գերատեսչություններից տեղեկատվական պաշտոնական հարցումների միջոցով ձեռք բերված տեղեկությունների ստացում և վերլուծություն:
- Ջրհեղեղով պայմանավորված աղետի, դրա արձագանքման ու հետադետային վերականգնման ոլորտում նախկինում իրականացրած հետազոտությունների երկրորդային ուսումնասիրություն:

### ***Կիսաձևայնացված հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ***

Նպատակային ընտրանքի միջոցով իրականացվել է **3** հարցազրույց թիրախ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև՝ աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնագիտացող անկախ փորձագետների հետ:

Առանցքային տեղեկատուների ցանկը համալրվել է այն սկզբունքով, որպեսզի հավասարապես ներկայացված լինեն ինչպես քաղաքականություն մշակողները, այնպես էլ՝ իրականացնողներն ու փորձագիտական համայնքը:

### **Ֆոկուս-խմբային քննարկումներ**

Անցկացվել են **2** ֆոկուս-խմբային քննարկումներ ջրհեղեղից տուժած և պետական փոխհատուցման ու աջակցության ծրագրերի շահառու հանդիսացող Իջևան և Այրում համայնքների բնակիչների և տնտեսվարողների շրջանում:

### **Ուսումնասիրության ընտրանքը**

Ուսումնասիրության թիրախ համայնքներն են հանդիսացել ՀՀ Տավուշի մարզի Իջևանը, Դիլիջանը և Նոյեմբերյանը:

Թեպետ ՀՀ Լոռու մարզը չի հանդիսանում այս ուսումնասիրության թիրախը, սակայն ուսումնասիրության ընթացքում ձեռք են բերվել նաև որոշակի տեղեկատվություններ նաև այս մարզի ջրհեղեղից տուժած և աղետի գոտու վերածված համայնքների վերաբերյալ: Արժևորելով ձեռք բերված տեղեկատվության կարևորությունը խնդրի համապարփակ ուսումնասիրության համատեքստում՝ ստացված տեղեկատվությունը առանձին դրվագներով տեղ է գտել զեկույցում:



Գոյություն ունեն «աղետ» եզրույթի ամենատարբեր սահմանումներ: Համաձայն ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի (UNDRR) ձևակերպման՝ աղետը սահմանվում է որպես համայնքի կամ հասարակության գործունեության լուրջ խաթարում ցանկացած մակարդակում՝ պայմանավորված վտանգավոր իրադարձություններով, որոնք փոխազդում են ազդեցության, խոցելիության և կարողությունների պայմանների հետ, որոնք հանգեցնում են մարդկային, նյութական, տնտեսական և շրջակա միջավայրի կորուստների և հետևանքների:

Աղետը համայնքի կամ հասարակության բնականոն կենսագործունեության խաթարումն է, որի հետևանքների վերացումը և հետադետային վերականգնումը գերազանցում են համայնքի կամ հասարակության սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը, իսկ աղետի ռիսկը աղետ առաջացնող վտանգի հավանականության և այդ աղետին ենթակա համակարգի խոցելիության համադրության արդյունքն է<sup>4</sup>:

Միջազգային պրակտիկայում աղետների ռիսկի կառավարումը միջոցառումների համալիր է, որը պետք է իրականացվի երեք հիմնական ուղղություններով.

1. Ռիսկերի բացահայտում, կանխում և կանխարգելում,
2. Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն,
3. Արձագանքում և հետադետային վերականգնում:

Ընդ որում, աղետների ռիսկի կառավարման արդյունավետությունը էապես կախված է, հատկապես վտանգի կանխման և կանխարգելման, ինչպես նաև՝ պատրաստվածության ուղղություններում կատարված աշխատանքների ծավալից և որակից:

Անցնող տարիներին օրենսդրական մակարդակում իրականացրած աշխատանքները որոշակի դրական հենք են նախապատրաստել ազգային մակարդակում աղետների ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման համար: 2023թ. հաստատվել է ՀՀ Աղետների ռիսկերի կառավարման ազգային նոր ռազմավարություն, որն ընդգրկում է ռիսկերի մոդելավորման, կանխարգելման և կառավարման մեխանիզմներ: Ներկայումս մշակման փուլում է գտնվում «Աղետների ռիսկերի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» նոր օրենքը, որը նախատեսում է աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքներին ավելի մեծ լիազորությունների տրամադրում: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ մշակվել և որոշ համայնքներում ներդրվել է տեղական մակարդակի ռիսկերի գնահատման գործիքակազմ, որը փորձարկվել է մի քանի համայնքներում:

<sup>4</sup>«Աղետների ռիսկի կառավարման 2023-2030թթ. ՀՀ ռազմավարություն», [https://www.arlis.am/Annexes/7/2023\\_N1717hav.1.pdf](https://www.arlis.am/Annexes/7/2023_N1717hav.1.pdf)

Այդուհանդերձ, 2024թ. մայիսի հեղեղումները լակմուսի թղթի նման դուրս բերեցին այն բոլոր բացերը, որ առկա են աղետների ռիսկերի կառավարման ոլորտում ազգային և հատկապես՝ համայնքային մակարդակում: Ի հայտ եկան նաև քաղաքացիական պաշտպանության ոլորտում հանրային իրազեկվածության խնդիրները, որոնք, ըստ փորձագիտական գնահատականների, հանգեցրել են բնակչության հապշտապ և հաճախ սխալ որոշումներին՝ բարդացնելով առաջին օգնության տրամադրման գործընթացը:

Աղետների ռիսկի կառավարման, ինչպես նաև՝ աղետի ազդեցության մեղմման համատեքստում առանձնակի կարևորություն ունի պետության կողմից ռիսկերի վաղաժամ բացահայտման կարողությունը, մինչդեռ 2024թ. մայիսյան հեղեղումները ակնհայտ դարձրեցին, որ աղետի գոտու վերածված համայնքներից մեծամասնությունը ապահովված չի եղել վաղ նախազգուշացման համակարգերով: Պետության բոլոր ջանքերը կոնսոլիդացվել են աղետի արձագանքման և հետադետային վերականգման մակարդակում, ինչը աղետների ռիսկի կառավարման տեսանկյունից արդյունավետ լինել չի կարող:

Արագ արձագանքման համակարգում կատարած աշխատանքների որակի մասին գնահատական տալիս և՛ համայնքային, և մարզային, և՛ պետական մարմինները, ինչպես նաև՝ միջազգային կազմակերպությունները միակարծիք են առ այն, որ պատկան մարմինները գործել են ստեղծված իրավիճակում ունեցած ռեսուրսներին ու հնարավորություններին համարժեք: Միևնույն ժամանակ ընդհանրական փորձագիտական գնահատականների համաձայն՝ առանձին վերցրած ո՛չ համայնքը, ո՛չ մարզը և ո՛չ էլ պետությունը պատրաստ չի եղել դիմագրավելու տարերային աղետը և որ ավելի կարևոր է՝ նախորոշող տարիներին չեն ձեռնարկվել աղետների վտանգի կանխման և կանխարգելման համալիր միջոցառումներ, չեն ներդրվել աղետների կառավարման համակարգեր, օրինակ՝ համակարգված ձևաչափով սելավատարերի մաքրման աշխատանքների իրականացում կամ սելավ առաջացնող տարածքների պահպանում:

Համայնքը, հանդիսանալով ցանկացած տեսակի տարերային աղետի հետևանքների ազդեցությունը կրող առաջնային օղակ, ամենաթույլ ներգրավածությունն է ունեցել աղետների ռիսկի կառավարման գործընթացներին: Իրավիճակը պայմանավորող գործոններից առավել կարևորներն են.

1. Ներկա օրենսդրական կարգավորումներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինները սեփական լիազորությունների շրջանակում չունեն աղետների ռիսկի բացահայտման, կանխման, մեղմման, ինչպես նաև՝ կանխարգելման ոլորտներում աշխատանք իրականացնելու իրավասություն: Համանման աշխատանքների իրականացումը մինչ այսօր հնարավոր է միայն ՀՀ Կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում:

2. Համայնքային բյուջեները չունեն առանձնացված տոդ, որը վերաբերում է աղետների ռիսկերի կառավարմանը: Համայնքային բյուջեի ընդհանուր կառուցվածքում ընդամենը 5% է նախատեսված արտակարգ իրավիճակների կառավարման համար (emergency fund):
3. Համայնքները թեպետ ունեն աղետների ռիսկի կառավարման պլաններ, սակայն դրանք մեծիմասամբ ձևական բնույթ են կրում, քանի որ համայնքներում բացակայում են արագ արձագանքման փորձարկված մեխանիզմները, համայնքային կառավարման հիմքում չի դրվում համայնքի և/կամ նրանում ներառված բնակավայրերի առանձին աղետների նկատմամբ խոցելիության գնահատումը: Օրինակ, քաղաքի գոտիավորման, տարածքային պլանավորման գործընթացները կազմակերպելիս՝ շինթույլտվություններ տրամադրելիս, ճանապարհաշինարարական աշխատանքներ իրականացնելիս կամ աղբահանության համար տարածքներ հատկացնելիս չեն մշակվում բնական և տեխնոլոգիական վտանգների ռիսկի մոդելավորման սցենարներ, որոնք կարող են զսպել կամ կանխարգելել այդ աշխատանքների իրականացումով պայմանավորված հնարավոր աղետների առաջացումը, ինչպիսին կարող է լինել օրինակ սելավների ու սողանքների առաջացումը: Այս բարձիթող վիճակը հանգեցրել է բնակիչների ու հատկապես բիզնեսների կողմից անպատասխանատու և որոշ դեպքերում՝ քրեորեն պատժելի գործողությունների իրականացմանը: Մինչ այսօր չկան վերլուծություններ, թե հեղեղումներից տուժած բիզնեսների կամ շինությունների քանի՞ տոկոսն է կառուցվել կառուցապատման համար չնախատեսված տարածքներում կամ առանց շինթույլտվությունների: Սա կոպտագույն բացթողում է հատկապես այն պայմաններում, երբ բնական վտանգների տեսանկյունից ՀՀ տարածքի 100%-ը ենթակա է ուժեղ երկրաշարժերի, 30%-ը՝ սելավների և ջրածածկումների, 100%-ը՝ կարկտահարման, 100%-ը՝ երաշտի, 100%-ը՝ ցրտահարությունների, 4.1%-ը՝ սողանքների, 0.5%-ը՝ փլուզումների ու քարաթափումների և այլն: Այն, որ աղետների ռիսկի կառավարման պլանի առկայությունը և տեղական մակարդակում աղետների ռիսկի գնահատումը կարող է մի քանի անգամ նվազեցնել հնարավոր բոլոր աղետների առաջացող բացասական հետևանքները ակնհայտորեն երևում է Ստեփանավանի փորձից, որը աղետից ամենաքիչ տուժած համայնքն է: Մայիսյան հեղեղումներին նախորդող ժամանակահատվածում Ստեփանավանում իրականացված ռիսկերի գնահատման արդյունքում համայնքապետարանը որոշել է ճանապարհաշինական նախագծերում ներառել ջրահեռացման համակարգեր (դրենաժ), ինչը կանխել է հնարավոր ջրակուտակումները:
4. Բացի այդ, համայնքներում՝ տեղական իշխանությունների և բնակիչների զգալի մասիմոտ բացակայում է բնական աղետների՝ որպես համայնքին սպառնացող հնարավոր վտանգի խորքային գիտակցումը: Շատ համայնքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրեր, առաջնային վտանգ են համարում պատերազմը, չեն

պատրաստվում այլ բնական աղետների և թերագնահատում են բնական աղետների ռիսկերը:

5. Համայնքապետարանները չունեն աղետների ռիսկի կառավարման բազմաֆունկցիոնալ մասնագետներ, աշխատանքային խմբեր, չկա նաև նման խմբեր ունենալու օրենսդրական պահանջ:

Ինչպես ավելի վաղ նշվեց, ջրհեղեղից հետո ՀՀ Կառավարության նախաձեռնությամբ իրականացվել են հետադետային կարիքների գնահատման աշխատանքներ: Հետադետային կարիքների գնահատման գործընթաց (ՀԿԳԳ)<sup>5</sup> իրականացվել է 9 ոլորտներում:

**Աղյուսակ 2.** Հայաստանում ՀԱԿԳ ոլորտները և ենթաոլորտները

| Սոցիալական            | Արտադրական                       | Ենթակառուցվածքներ                                                                                                                                         | Փոխկապակցված                                                            |
|-----------------------|----------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------|
| • Բնակարանաշինություն | • Գյուղատնտեսություն<br>• Բիզնես | • Տրանսպորտ<br>• Համայնքային ենթակառուցվածքներ (հեռահաղորդակցություն, ջրամատակարարում և սանիտարահիգիենիկ ոլորտ, էներգետիկա, կրթություն, առողջապահություն) | • Բնապահպանություն<br>• Աղետների ռիսկի նախապատրաստում (ԱՌՆ)<br>• Գենդեր |

ՀԿԳԳ-ը ՄԱԿ-ի, ԵՄ-ի և Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից հաստատված համաշխարհային մեթոդաբանություն է, որն իրականացվում է որպես համատեղ համակարգվող ոլորտային գործողություն, որի շրջանակներում հատկորոշվում են աղետից տուժած աշխարհագրական տարածքի վնասները, կորուստները և կարիքները:

**Աղյուսակ 3.** ՀԿԳԳ արդյունքներն ըստ ոլորտային հետևանքների և ազդեցության

|                        |                                                                                                                                                                                                                                                                              |
|------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Մարդկային ազդեցություն | <ul style="list-style-type: none"> <li>• Ջրհեղեղից տուժել է 40,839 մարդ,</li> <li>• 2,382 մարդ ժամանակավորապես տարհանվել է,</li> <li>• 4 զոհ:</li> </ul>                                                                                                                     |
| Բիզնես                 | <ul style="list-style-type: none"> <li>• 2,100 աշխատանքի կորուստ,</li> <li>• 149 տուժած բիզնես/ձեռնարկություն,</li> <li>• Ամբողջ վնասի 46%-ը կապված է շենքերի, 35%-ը՝ արտադրական գծերի, սարքավորումների և գործիքների, իսկ 18%-ը՝ պահեստում առկա ապրանքների հետ:</li> </ul>   |
| Բնակարանաշինական ոլորտ | <ul style="list-style-type: none"> <li>• Վնասվել է 25 բնակելի տարածք, որոնք ենթակա չեն վերանորոգման,</li> <li>• 244 բնակելի տարածք էական վնաս է կրել,</li> <li>• Վնասվել է 155 սեփական տուն և 114 բնակարան,</li> <li>• Վնասի ընդհանուր մակերեսը եղել է 22,058 քմ:</li> </ul> |

<sup>5</sup> «Հայաստանում ջրհեղեղի հետադետային կարիքների գնահատում» զեկույց, հեղինակ՝ Կրունոսլավ Կատիչ, նոյեմբեր 22, 2024թ.

|                            |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
|----------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Գյուղատնտեսություն         | <ul style="list-style-type: none"> <li>• Տուժել է 24 ոռոգման օբյեկտ (3,587մ խողովակաշար/ջրանցք և 43 պոմպ/պոմպակայան),</li> <li>• 162 հա հողատարածք հեղեղվել է,</li> <li>• Վնասվել են 84 հա բազմամյա մշակաբույսեր,</li> <li>• Դադարեցվել է 43 հա բերքի մշակումը (ոռոգման համակարգի կորստի կամ վնասման պատճառով),</li> <li>• Ընդհանուր առմամբ հեղեղվել են 304 հա բարձրարժեք տարեկան մշակաբույսերի հողեր և 310 հա ցածրարժեք տարեկան մշակաբույսերի հողեր,</li> <li>• Զգալիորեն կրճատվել է անասնաբուծությունը:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                           |
| Համայնքային ենթակառուցվածք | <ul style="list-style-type: none"> <li>• Տուժած համայնքների 45%-ում կապի ամբողջական խափանում է գրանցվել,</li> <li>• Մասամբ վնասվել է 6,074 մետր գազատար,</li> <li>• Վնասվել են էլեկտրահաղորդման գծեր, տրանսֆորմատորներ, էլեկտրակայաններ,</li> <li>• Վնասվել է 680 մետր կոյուղատար համակարգ,</li> <li>• Մասամբ կամ ամբողջությամբ վնասվել է խմելու ջրի 4,090 մետր խողովակաշար,</li> <li>• Առողջապահական համակարգում վնասվել է մեկ բուժհաստատություն և երկու դեղատուն,</li> <li>• Կրթական համակարգում վնասվել է մեկ դպրոց և նախակրթարան:</li> </ul>                                                                                                                                                                                                                                               |
| Տրանսպորտ                  | <ul style="list-style-type: none"> <li>• Ազգային M6 մայրուղին 50 կմ երկարությամբ վնասվել է 30 հատվածներում (ընդհանուր 7,1 կմ).</li> <li>• Ազգային M4 մայրուղին 11 կմ երկարությամբ մասամբ վնասվել է 10 հատվածներում,</li> <li>• 50 կմ երկարությամբ հատվածում 2 կմ երկաթուղային գիծն ամբողջությամբ վնասվել է մի քանի վայրերում,</li> <li>• Փլուզվել է 4 ավտոմոբիլային կամուրջ, որոնք Դեբեդ գետի վրայով բնակավայրերը միացնում էին M6 մայրուղուն,</li> <li>• Ավերվել կամ մասամբ վնասվել են 7 փոքր ավտոմոբիլային կամուրջներ և 8 ջրահեռացման կառույցներ,</li> <li>• Քանդվել կամ մասնակի վնասվել է 20 հետիոտնային կամուրջ,</li> <li>• 1,677 մետր հենապատ վնասվել է Մ6 ավտոճանապարհին, և 1156 մետր՝ Ալավերդի, Տաշիր և Դիլիջան համայնքներում,</li> <li>• Վնասվել/ոչնչացվել է 161 ավտոմեքենա:</li> </ul> |
| Բնապահպանություն           | <ul style="list-style-type: none"> <li>• Էրոզիայի ենթարկված/վազված գետափերի ծավալը գնահատվում է 422.242մ3,</li> <li>• Արմատախիլ արված ծառերի ծավալը՝ 594մ3 (ընդհանուր 2,969 ծառ),</li> <li>• Հողի, ցեխի, փայտի և մետաղական կուտակումների մակերեսը՝ 142,7 հա:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |

Հետադետային կարիքների գնահատման փուլում արձանագրած ամենամեծ մարտահրավերը եղել է ուսումնասիրվող գրեթե բոլոր ոլորտներում ելակետային տվյալների բացակայությունը,

ինչը հնարավորություն չի տվել որակյալ ձևով իրականացնել վնասների և կորուստների գնահատում:

Ըստ որոշ փորձագիտական գնահատականների՝ բազային տվյալների բացակայությունը կազմել է մոտավորապես 80-85%: Բացառություն է կազմում բնակարանաշինության ոլորտը, որտեղ գնահատման աշխատանքները սկսել են ամենաուշը, սակայն ամենառաջինն են պատրաստ եղել՝ շնորհիվ բնակարանային ֆոնդի վերաբերյալ ՀՀ Կադաստրի կոմիտեում առկա ելակետային տեղեկատվության: Մասնակի ելակետային տվյալներ են տնօրինել նաև մասնավոր կազմակերպությունները՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, սակայն անգամ այս կազմակերպությունները ռիսկերի մոդելավորման, վտանգների քարտեզագրման համատեքստում ևս չեն տնօրինել անհրաժեշտ տեղեկատվության. կապուղիները, գազատարները անց են կացվել, խողովակաշարերով, որոնք առկա են, առանց հաշվի առնելու դրանց տեղակայման ճանապարհների անվտանգության աստիճանը: Ասվածի ապացույցն են 35-ից ավել կապուղիների, կամուրջների վնասումը, որոնք իրենց հերթին հանգեցրել են այդ կամուրջներով անցնող գազատար, ջրատար կամ կոյուղաջրերի հեռացման համար նախատեսված խողովակաշարերի վնասմանը:



Երկրորդ, հետադեպային **կարիքների գնահատման մեթոդաբանությունը եղել է թերի**, քանի որ այն թույլ է տվել հաշվառել աղետի հետևանքով գրանցված ուղիղ վնասը<sup>6</sup> (օրինակ՝ վնասված տների, մեքենաների, ծառերի քանակ), մինչդեռ ամբողջական և ընդգրկուն գնահատումը ենթադրում է նաև կորուստների<sup>7</sup> հաշվառում (կորսված ծառերի բերքից ձեռք բերվող եկամուտ, փլուզված ճանապարհը շրջանցելու համար կատարվող հավելյալ ծախս և այլն): Բացի այդ որոշակի խնդիրներ են առաջացել գնահատման ձևաչափերի հետ՝ համայնքներին ներկայացվել են կարիքների գնահատման ձևաթղթեր, որոնք ընթացքում փոխարինվել են նորերով, ինչը ձգձգել է գործընթացի կազմակերպման ընթացքը:

Համաձայն հետադեպային գնահատման արդյունքների՝ վնասի ու կորստի չափը ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում համապատասխանաբար կազմել է **49,43 մլն ԱՄՆ դոլար և 33 մլն ԱՄՆ դոլար (ընդամենը՝ 82,43 մլն ԱՄՆ դոլար)**:

<sup>6</sup> \*Ֆիզիկական ակտիվների ամբողջական կամ մասնակի վնասումն է

<sup>7</sup> \* Աղետի հետևանքով առաջացած տնտեսական հոսքերի փոփոխություններ

**Գծապատկեր 1.** ՀԿԳԳ ընդհանուր վնասն ու կորուստը՝ ըստ համայնքների և սեփականության ձևի (մլն ԱՄՆ դոլար)



Վնասի ու կորստի համադրմամբ աղետի հետևանքներից ամենաշատը տուժել են տրանսպորտի ոլորտը (40%), գյուղատնտեսությունը՝ (23%) և բիզնեսն ու շրջակա միջավայրը՝ (յուրաքանչյուրը՝ 12%):

Համայնքների մակարդակում ամենաշատը տուժել է Ալավերդին՝ 32,47մլն ԱՄՆ դոլար (39%), երկրորդը՝ Նոյեմբերյանը՝ 16,58 ԱՄՆ դոլար (20%): Սեփականության ձևով պայմանավորված՝ առավելապես տուժել է հանրային ոլորտը, վնասի ու կորստի չափը կազմել է 52% (42,92 մլն ԱՄՆ դոլար), մասնավորում՝ 48% (39,11 մլն ԱՄՆ դոլար):

Եվ վերջապես, հետադետային կարիքների գույքագրման և գնահատման համար ինչպես համայնքային, այնպես էլ՝ ազգային մակարդակում, նկատվել է **համապատասխան մասնագետների զգալի պակաս**: Հետադետային կարիքների գույքագրման և գնահատման աշխատանքներին ներգրավված են եղել համայնքային և մարզային իշխանությունները, գրեթե բոլոր նախարարությունները: Գույքագրման աշխատանքները իրականացրել են.

1. Աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասների գնահատման (գույքագրման) համայնքային հանձնաժողովները,
2. Աղետի պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովները,
3. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձնաց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը, որի առաջնորդող գերատեսչությունն է հանդիսացել ՀՀ Ներքին գործերի նախարարությունը<sup>8</sup>:

Գնահատման գործընթացը մեկնարկել է վնասված գույքի հաշվառմամբ և այս առաջնային օղակում ներգրավված են եղել համայնքային հանձնաժողովները: Գույքագրված կարիքների ամփոփ տվյալները այնուհետ ներկայացվել են մարզային հանձնաժողովին, վերջինս էլ այն փոխանցել է հանրապետական հանձնաժողովի դիտարկմանը: Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան համայնքներում համայնքային հանձնաժողովները ներառել են համայնքապետարանի տարբեր ստորաբաժանումների, աշխատակիցների, վարչական ղեկավարների, մարզպետարանի ներկայացուցիչների և այլն: Նոյեմբերյանում համայնքային հանձնաժողով ձևավորվել է 2024թ. մայիսի 27-ին ավագանու թիվ 1802-Ա որոշման համաձայն, Դիլիջանում՝ 2024թ. հունվարի 25-ի թիվ 123-Ա որոշմամբ, իսկ Իջևանում համանման հանձնաժողով ձևավորվել է դեռևս 2022թ. հունիսի 10-ի համայնքի ղեկավարի թիվ 148 կարգադրությամբ: Համայնքներից Նոյեմբերյանը, որտեղ հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ որոշումը ընդունվել է աղետին հաջորդող ժամանակահատվածում, մատնանշել է, որ թեպետ բոլոր անհրաժեշտ կանոնակարգերի առկայությանը, նախապես կազմավորված և պատրաստված հանձնաժողով համայնքը չի ունեցել, ինչը հանգեցրել է ժամանակի կորուստի և գույքագրման աշխատանքների ուշ մեկնարկին: Մյուս համայնքներից հանձնաժողովների աշխատանքի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերել չի հաջողել, սակայն փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աղետին հաջորդող ժամանակահատվածներում այդ հանձնաժողովներում եղել են հանձնաժողովի անդամների փոփոխություններ, ըստ ամենայնի հանձնաժողովների կազմերը թարմացվել են, ինչը անուղղակի մատնանշում է, որ այդ հանձնաժողովները ևս մոբիլիզացված չեն եղել անմիջապես աշխատանքի անցնելու համար: Հանձնաժողովների աշխատանքի օպերատիվության վրա բացասաբար են անդրադարձել նաև որոշակի ֆորմալ ընթացակարգերին հետևելու անհրաժեշտությունը (ավագանու որոշումներ, հանձնաժողովների ձևավորում): Այդուհանդերձ, համայնքների, բնակիչների և փորձագետների գնահատականներով՝ համայնքային հանձնաժողովները աշխատել են օպերատիվ, իրենց ներուժի ու կարողությունների սահմագծում:

<sup>8</sup> «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձնաց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը հաստատելու և ՀՀ Վարչապետի 2007թ. փետրվարի 8-ի N97-Ա որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=193264>

Ինչ վերաբերում է կարիքների գնահատման աշխատանքներին, դրանք իրականացվել են համապատասխան նախարարությունների կողմից: Այսպես, ֆիզիկական անձանց պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման աշխատանքները իրականացրել է ՀՀ ՆԳՆ-ը, իրավաբանական անձանց պարագայում՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ) և այլն:

Կարիքների գնահատման և առհասարակ, աղետների արձագանքման այս բրգաձև հիերարխիայում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված գործառույթները փաստացի սահմանափակվել են բացառապես վնասների գույքագրմամբ/գնահատմամբ: Համայնքներից և ոչ մեկը ուղղակիորեն դրամական միջոցներ չի ստացել ՀՀ Կառավարությունից փոխհատուցման և սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման համար: Համայնքները ուղղակիորեն աշխատել են աղետից տուժած քաղաքացիների հետ, աջակցել դիմումների ներկայացման գործընթացներում: Գործառույթների տարանջատումը տարբեր գերատեսչությունների, ինչպես նաև՝ համայնքային և մարզային իշխանությունների միջև մի կողմից կարող է տպավորություն ստեղծել գործընթացի համակարգված լինելու մասին, սակայն հետազոտության հետագա արդյունքները ցույց են տալիս, որ համայնքի բնակիչների համար բավականին բարդ է եղել ուղիղ հաղորդակցվել նախարարությունների հետ, նրանցից ստանալ հետադարձ պատասխաններ: Հեռավորությամբ պայմանավորված՝ աղետից տուժած քաղաքացիներից շատերը ունեցել են տեղեկատվության հասանելիության խնդիրներ: Ավելին՝ Էլեկտրոնային տարբերակով դիմումների ներկայացման ընթացքում առաջացել են որոշակի տեխնիկական բնույթի խնդիրներ: Աղետների կառավարման համաշխարհային փորձը ևս կարևորում է գործառույթների բաշխման համակարգված մոտեցումը (bottom-up և top-down համագործակցությամբ<sup>9</sup>), որտեղ, այնուամենայնիվ, ամենաբարձր ներգրավվածությունը վերապահվում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես բնակիչներին առավել մոտ գտնվող իշխանությունների:


Գործընթացում ամենատարբեր դերակատարների ներգրավումը հանգեցրել է նաև պաշտոնական տեղեկատվության քառսին: Հետազոտության ընթացքում մեկ աղբյուրից հնարավոր չի եղել ձեռք բերել ամբողջական համապարփակ տեղեկատվություն աղետի ու պետության աջակցության ծրագրերի վերաբերյալ: Մարզային իշխանությունները և համայնքներից Դիլիջանը կտրականապես հրաժարվել են տրամադրել տեղեկատվություն և միայն նախարարությունների միջորդության շնորհիվ են տրամադրել դրանք: Այդ մարմինների գործողությունները «Տեղեկավորության ազատության մասին» ՀՀ օրենքի կոպիտ ոտնահարում է,

<sup>9</sup> Ըստ Harvard Business Review-ի, bottom-up կառավարումը բնութագրվում է որպես գործընթաց, որտեղ առաջնային որոշումները կայացվում են ստորին մակարդակներում, ապա վերակառուցվում են կազմակերպության ղեկավարության կողմից՝ ավելի լայն ռազմավարական համատեքստում:

քանի որ որպես հանրային տեղեկատվության տնօրինող կողմ հավասարապես հանդես են գալիս համայնքային ու պետական ռեսուրսներ տնօրինող բոլոր կառույցներն ու կազմակերպությունները: Այս հանգամանքը, հանգեցրել է ջրհեղեղով պայմանավորված աղետի շրջանակներում իրականացրած ծրագրերի թափանցիկության մակարդակի նվազմանը:

Վերականգնման կարիքը գնահատվել է մոտ **116,94 մլն ԱՄՆ դոլար**, ամենաբարձր կարիքը գնահատվել է տրանսպորտի ոլորտում, ամենացածրը՝ համայնքային ենթակառուցվածքների ոլորտում: Կարիքների գնահատման համատեքստում կարևոր բացահայտում է նաև աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գրանցված բարձր կարիքը՝ **14,91մլն ԱՄՆ դոլար**:

**Գծապատկեր 2.** ՀԱԿԳ վերականգնման կարիքներն ըստ ենթահամակարգերի և ժամանակահատվածի



Պետության արձագանքման ծրագրերի շրջանակում ՀՀ Կառավարության կողմից հատկացվել է ավելի քան **7,5 մլն ԱՄՆ դոլար** գումար, որը գնահատված կարիքը հասցեագրում է ընդամենը **6,4%-ով**:

**Աղյուսակ 4.** ՀՀ Լոռի և Տավուշ մարզերում ՀՀ Կառավարության իրականացրած ծրագրեր (ԱՄՆ դոլար)

| Ծրագիր                                                  | ՀՀ Կառավարության որոշումներով կատարված հատկացումներ | Վերաբաշխումներից կատարված հատկացումներ | ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումներ |
|---------------------------------------------------------|-----------------------------------------------------|----------------------------------------|-----------------------------------------------------------|
| ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՀՆ) | 0,01                                                | 0,01                                   | -                                                         |

|                                                                                                                                              |             |             |             |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------|-------------|-------------|
| Ֆիզիկական անձանց տրամադրած սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են ջրհեղեղով պայմանավորված արտակարգ իրավիճակի հետևանքների վերացմանը | 0,01        | 0,01        |             |
| <b>ՀՀ ՏԿԵՆ</b>                                                                                                                               | <b>3,35</b> | <b>0,77</b> | <b>2,58</b> |
| Առաջնահերթ լուծումներ պահանջող ծրագրեր, որոնց արդյունքում կլուծվեն սոցիալապաես կարևոր խնդիրներ, որոնց շահառու են հանրության լայն շերտեր      | 0,77        | 0,77        |             |
| Ջրհեղեղից տուժած ընտանիքներին ֆինանսական աջակցություն                                                                                        | 2,58        | -           | 2,58        |
| <b>ՀՀ ԷՆ</b>                                                                                                                                 | <b>0,39</b> | <b>-</b>    | <b>0,39</b> |
| Գյուղատնտեսության ոլորտում հասցված վնասի/կորուստի վերացմանն ուղղված ծրագրեր                                                                  | 0,39        | -           | 0,39        |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                                                                              | <b>3,75</b> | <b>0,78</b> | <b>2,97</b> |

## ՋՐՀԵՂԵՂԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՌԻՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

### Իրավական կարգավորումներ

Աղետի գոտիներում հեղեղումներից տուժած անձանց/ընտանիքներին փոխհատուցումների և աջակցությունների տրամադրման հարցերը կարգավորելու համար ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, որոնք են.

1. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին 4 հուլիսի 2024թ. N 1033 – Լ որոշում<sup>10</sup>,
2. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին 4 հուլիսի 2024թ. N 1043 – Ն որոշում<sup>11</sup>,
3. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում տնտեսվարողներին աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին 15 օգոստոսի 2024թ. N 1301-Լ որոշում<sup>12</sup>,
4. ՀՀ Կառավարության 4 հուլիսի 2024թ. N 1033 – Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ անելու մասին 15 օգոստոսի 2024թ. N 1298 – Լ որոշում<sup>13</sup>,
5. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում, բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին 15 օգոստոսի 2024թ. N 1264 – Լ որոշում<sup>14</sup>,
6. ՀՀ Կառավարության 2024թ. հուլիսի 4-ի N 1043-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին 15 օգոստոսի 2024 թվականի N 1275 – Ն որոշում<sup>15</sup>:

Չնայած աջակցության ծրագրերի բազմազանությանը, դրանց տրամադրման գործընթացը ուղեկցվել է բազմաթիվ խնդիրներով, որոնք եղել են առավելապես տեխնիկական-

<sup>10</sup> ՀՀ Կառավարության 4 հուլիսի 2024թ. N 1033 – Լ որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=194905>

<sup>11</sup> ՀՀ Կառավարության 4 հուլիսի 2024 թվականի N 1043 – Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=201237>

<sup>12</sup> ՀՀ Կառավարության 15 օգոստոսի 2024թ. N 1301-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196459>

<sup>13</sup> ՀՀ Կառավարության 4 հուլիսի 2024թ. N 1298 – Լ որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=196469>

<sup>14</sup> ՀՀ Կառավարության 15 օգոստոսի 2024 թվականի N 1264 – Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=196411>

<sup>15</sup> ՀՀ Կառավարության 15 օգոստոսի 2024 թվականի N 1275 – Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=196383>

կազմակերպական բնույթի, ինչի հետևանքով, օրինակ, 2024թ. օգոստոսի կեսերի դրությամբ աղետից տուժած ընտանիքների գրեթե կեսը աջակցության ծրագրերից օգտվելու դիմումներ չի ներկայացրել համայնքապետարան: Ավելին, ջրհեղեղից գրեթե երեք ամիս անց ջրհեղեղից տուժած ընտանիքները դեռևս որևէ ֆինանսական օգնություն չէին ստացել պետությունից:

Խնդրի ակունքներում ամենատարբեր գործոններն են. մի կողմից, հաշվի առնելով աղետի մասշտաբայնությունը, համայնքային հանձնաժողովների համար բավականին բարդ է եղել սեղմ ժամկետներում պատրաստել աղետից տուժած քաղաքացիների դիմումները, նամանավանդ, որ նրանցից շատերը ունեցել են փաստաթղթերի հետ առչվող խնդիրներ (կորսված սեփականության վկայականներ, բանկային հաշվեհամարների բացակայություն և այլն): Ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ աղետից տուժած քաղաքացիները բարձրաձայնել են դիմումների ներկայացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվության պակասի մասին: Իրավիճակը հավելյալ բարդացել է նրանով, որ աջակցության ու փոխհատուցման ծրագրերի մեկնարկից հետո որոշակի փոփոխություններ են մտցվել աջակցության ծրագրերի տրամադրման ձևաչափերում, ինչի արդյունքում դիմումների փաթեթները կազմվել են կրկնակի անգամ: Վնասների փոխհատուցման գործընթացի դանդաղ ու բարդացված ընթացքը խոսում է գործառնական մակարդակում ցանկացած տիպի աղետին պետության/համայնքի պատրաստվածության պակասի, հաղորդակցության ոչ արդյունավետ համակարգերի և գործընթացը ուղեկցող բյուրոկրատական խոչընդոտների մասին:

Այդուհանդերձ, հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները մատնանշում են տրամադրված փոխհատուցման ծրագրերից քաղաքացիների ընդհանուր գոհունակության մասին: Առավել արդյունավետ են իրականացվել բնակարանաշինարարության, գյուղատնտեսության ոլորտում գրանցված վնասների փոխհատուցման ծրագրերը, բողոքներ առավելապես գրանցվել են տրանսպորտային միջոցների և տնտեսվարող սուբյեկտների կրած վնասների փոխհատուցման ծրագրերի իրականացման ընթացքում, որի վերաբերյալ վերլուծությունները կներկայացվեն զեկույցի հաջորդիվ գլուխներում:

**ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության ծրագիր**

ՀՀ Կառավարության կողմից սահմանվել են աղետից տուժած ֆիզիկական անձանց (շահառուների) միանվագ դրամական օգնության հետևյալ տեսակները՝

1. Զոհված անձանց ընտանիքների դեպքում՝ 1,000,000 ՀՀ դրամի չափով սոցիալական աջակցություն.
2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի և ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրերի դեպքում՝

ա. բնակության համար նախատեսված փաստացի օգտագործած անշարժ գույքի վնասման հիմքով՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվարկով՝ 60 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում,

բ. բնակության համար չնախատեսված փաստացի օգտագործած 5 և ավելի քառակուսի մետր մակերեսով շինության վնասման հիմքով՝ յուրաքանչյուր ընտանիքի հաշվարկով՝ 200 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում,

գ. բնակության համար չնախատեսված փաստացի օգտագործած մինչև 5 քառակուսի մետր մակերեսով շինության վնասման հիմքով՝ յուրաքանչյուր ընտանիքի հաշվարկով՝ 50 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում.

3. ՀՀ Լոռու մարզի Թումանյան, Փամբակ, Տաշիր, Ստեփանավան, Գյուլագարակ համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Բագրատաշեն, Դեբեդավան, Հաղթանակ, Պտղավան բնակավայրերի և Դիլիջան ու Իջևան համայնքների դեպքում՝

ա. բնակության համար նախատեսված փաստացի օգտագործած անշարժ գույքի վնասման հիմքով՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվարկով՝ 40,000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում,

բ. բնակության համար չնախատեսված փաստացի օգտագործած 5 և ավելի քառակուսի մետր մակերեսով շինության վնասման հիմքով՝ յուրաքանչյուր ընտանիքի հաշվարկով՝ 150,000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում,


գ. բնակության համար չնախատեսված փաստացի օգտագործած մինչև 5 քառակուսի մետր մակերեսով շինության վնասման հիմքով՝ յուրաքանչյուր ընտանիքի հաշվարկով՝ 50,000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում:

Աղետից տուժած ֆիզիկական անձանց սոցիալական աջակցության միջոցառումների ծրագիրը իրականացվել է ՀՀ Միասնական սոցիալական ծառայության կողմից (այսուհետ՝ ՄՄԾ): ՄՄԾ-ի կողմից տուժած ընտանիքների առաջնային կարիքների գնահատման համար հիմք են հանդիսացել աղետից տուժած անձանցից ստացված դիմումները (այդ թվում նաև՝ e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով), որոնց իրավաչափությունը և համապատասխանությունը օրենքով սահմանված նորմերին<sup>16</sup> գնահատելուց հետո 30-օրյա ժամկետներում իրականացվել է ծախսերի փոխհատուցման անկանխիկ գործընթացը:


<sup>16</sup> ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման կարգ, Հավելված 2, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=196470>

Միջոցառման մեկնարկից մինչև 2024թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ ՄՄԾ-ն ստացել է **621 դիմում** (1510 անձ), որից բավարարվել է **578 դիմում** (1425 անձ)՝ **Լոռու մարզից 463 դիմում** (1036 անձ), իսկ **Տավուշի մարզից՝ 115 դիմում** (389 անձ):

**Գծապատկեր 3.** 2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բավարարված և չբավարարված դիմումների քանակը



**Գծապատկեր 4.** 2024թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ստացված դիմումների բաշխումը՝ ըստ Լոռու և Տավուշի մարզերի



Դիմումները առավելապես ստացվել են Լոռու մարզից՝ 463 դիմում, ինչը գրեթե չորս անգամ գերազանցում է Տավուշի մարզից ստացված դիմումների թիվը (115 դիմում): Դիմումները ենթարկվել են ուսումնասիրության՝ պահանջվող չափանիշներին դրանց համապատասխանության ստուգման նպատակով: Ստացված դիմումների գրեթե 7%-ը մերժվել է: Մերժման հիմքերը եղել են տարբեր, դրանք հիմնականում պայմանավորված են եղել հետևյալ հանգամանքներով.


1. Դիմողները ներառված չեն եղել այն աղետներից տուժածների վերաբերյալ ՀՀ Լոռու և Տավուշի մարզպետների աշխատակազմերի կազմած ցուցակներում: Սեպտեմբեր 20, 2024թ. դրությամբ այդպիսի 17 դեպք է գրանցվել (17 ընտանիք/49 անձ):
2. Դիմողները հաշվառված չեն եղել բնակչության պետական ռեգիստրում (չնույնականացվելու հիմքով): Սեպտեմբեր 20, 2024թ. դրությամբ այդպիսի 5 դեպք է գրանցվել (5 ընտանիք/8 անձ):
3. Դիմողները նախկինում արդեն իսկ օգտված են եղել սոցիալական աջակցման ծրագրից: Սեպտեմբեր 20, 2024թ. դրությամբ այդպիսի 1 դեպք է գրանցվել (1 ընտանիք/4 անձ):

4. Դիմողների մոտ եղել են անձը հաստատող փաստաթղթի հետ անճշտություններ և անհամապատասխանություններ՝ անձնագրի, ծննդյան տվյալների սխալ, հանրային ծառայությունների համարանիշի կամ հանրային ծառայությունների համարանիշի վերաբերյալ տեղեկանքի բացակայություն: Սեպտեմբեր 20, 2024թ. դրությամբ այդպիսի 2 դեպք է գրանցվել (2 ընտանիք/2 անձ):

Բնակության համար նախատեսված փաստացի օգտագործած անշարժ գույքի և բնակության համար չնախատեսված փաստացի օգտագործած շինության վնասման հիմքով ՀՀ Կառավարությունից ջրհեղեղից տուժած Լոռու և Տավուշի մարզերին հատկացվել է **127,760,000 ՀՀ դրամ**, որից.

- 4 զոհված անձանց ընտանիքներին վճարվել է միանվագ սոցիալական աջակցություն 4,000,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուրին՝ 1,000,000 ՀՀ դրամ,
- Բնակության համար նախատեսված փաստացի օգտագործած անշարժ գույքի վնասման հիմքով վճարվել է 40.610.000 ՀՀ դրամ (Լոռի՝ 38.450.000 ՀՀ դրամ, Տավուշ՝ 2.160.000 ՀՀ դրամ).
- Բնակության համար չնախատեսված փաստացի օգտագործած շինության վնասման հիմքով վճարվել է 83.150.000 ՀՀ դրամ (Լոռի՝ 64.300.000 ՀՀ դրամ, Տավուշ՝ 18.850.000 ՀՀ դրամ):

**Գծապատկեր 5.** ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին տրամադրած պետական սոցիալական աջակցության չափը՝ ըստ վնասի կատեգորիաների



**Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման ծրագիր**

Ընդունված կարգի շրջանակներում փոխհատուցման ենթակա են սահմանվել բազմաբնակարան շենքի բնակարանին կամ անհատական բնակելի տանը և կենցաղային առաջնային գույքին պատճառված վնասները:

Վնասի փոխհատուցումը մերժվել է հետևյալ երկու դեպքերում.

1. առկա է եղել գույքի՝ արտակարգ իրավիճակներից ապահովագրություն,
2. անշարժ գույքը հանդիսացել է ինքնակամ:

#### **Փոխհատուցման եղանակն ու չափը**

- Բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան կորստի դեպքում ֆիզիկական անձին տրամադրվելու է բնակարանի գնման վկայագիր: Կորուստ է համարվում արտակարգ իրավիճակի հետևանքով տուժած ֆիզիկական անձի՝ բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան՝ աղետի հետևանքով ոչնչացումը, փլուզումը կամ վթարային՝ քանդման ենթակա (4-րդ կամ 5-րդ աստիճանի վնասվածության) դառնալու փաստը:
- Բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան կորստի (բացառությամբ վթարային՝ քանդման ենթակա բազմաբնակարան շենքի այն բնակարանների, որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովի կողմից հեղեղման փաստ չի արձանագրվել) դեպքում ֆիզիկական անձին տրամադրվում է նաև կենցաղային առաջնային գույքի կազմի մեջ մտնող գույքային միավորների ապահովման համար անհրաժեշտ դրամական փոխհատուցում 1.200.000 ՀՀ դրամի չափով:
- Բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան բնակելի տարածքին պատճառված վնասի դեպքում ֆիզիկական անձինք ստանում են փոխհատուցման գումար վերանորոգման համար, ինչպես նաև կենցաղային առաջնային գույքին պատճառված վնասի փոխհատուցման համար:

Յուրաքանչյուր քառակուսի մետրի վերանորոգման համար (բայց ոչ ավելի 80 քառակուսի մետրից) հատուցվում է՝

1. Լոռու մարզի Ալավերդի համայնքի և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի դեպքում՝ 60.000 ՀՀ դրամ,
2. Լոռու մարզի Թումանյան, Փամբակ, Տաշիր, Ստեփանավան, Գյուլագարակ համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արձիս, Բագրատաշեն,

Դեբեդավան, Հաղթանակ, Պտղավան բնակավայրերի և Դիլիջան ու Իջևան համայնքների դեպքում՝ 40,000 ՀՀ դրամ:

Իսկ կենցաղային առաջնային գույքին պատճառված վնասի համար փոխհատուցվում է՝ Լոռու մարզի Ալավերդի համայնքի և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի դեպքում՝ 1,200,000 ՀՀ դրամ: Լոռու մարզի Թումանյան, Փամբակ, Տաշիր, Ստեփանավան, Գյուլագարակ համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Բագրատաշեն, Դեբեդավան, Հաղթանակ, Պտղավան բնակավայրերի և Դիլիջան ու Իջևան համայնքների դեպքում՝ 800,000 ՀՀ դրամ:

Աղետի հետևանքով ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում ընդհանուր առմամբ վնասվել է 25 բնակելի տարածք, որոնք ենթակա չեն վերանորոգման, 244 բնակելի տարածքի էական վնաս է կրել, վնասվել է 155 սեփական տուն և 114 բնակարան:

Ոլորտին հասցված ընդհանուր վնասը (ֆիզիկական անձանց հասցված վնասը) գնահատվել է **4,54 մլն ԱՄՆ դոլար**, կորուստը՝ **0,28 մլն ԱՄՆ դոլար**: Վնասի մասով ամենաշատը տուժել է Ալավերդի համայնքը (2,86 մլն ԱՄՆ դոլար), ամենաքիչը՝ Թումանյան համայնքը՝ (0,06 մլն ԱՄՆ դոլար)<sup>17</sup>: Մինչդեռ այս ծրագրի շրջանակներում վնասների փոխհատուցման նպատակով ՀՀ Կառավարության կողմից հատկացված ֆինանսական միջոցները 2025թ. փետրվար ամսվա դրությամբ կազմել են **1,150,000,000 ՀՀ դրամ**, մոտավորապես 25%-ը:

Համաձայն ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության մարզում բնակարանային ոլորտում գրանցվել են հետևյալ վնասները.

1. Վնասվել է թվով **19** անհատական բնակելի տուն: Նոյեմբերյան համայնքի Այրումում՝ 9-ը, Բագրատաշենում՝ 6-ը, Դիլիջան համայնքում վնասվել է 4, որից 1-ը Հաղարծինում քանդվել է: Վնասի փոխհատուցման համար հատկացված ֆինանսական միջոցները՝ վերանորոգման, առաջնային գույքի և բնակարանի գնման վկայագրի համար կազմել է **89,702,900 ՀՀ դրամ**: Բնակարանի գնման վկայագիր տրվել է մեկ անձի:
2. Ոչ բնակելի շինություններին պատճառված վնասի համար ֆինանսական աջակցություն են ստացել **134** շահառու, որից 9-ը՝ Դիլիջան համայնքում, 125-ը՝ Նոյեմբերյանում: Վնասի փոխհատուցման համար ՀՀ Կառավարությունից հատկացվել է **18,850,000 ՀՀ դրամ** գումար:

Այս և մնացյալ բոլոր ծրագրերի պարագայում բավականին բարդ է եղել մեկ աղբյուրից ձեռք բերել ամբողջական տեղեկատվություն ըստ ծրագրի ստացված դիմումների քանակի, հաստատված և մերժված դիմումների քանակի, ըստ մարզերի և համայնքների՝ հատկացված

<sup>17</sup> Armenia floods, may 2024, post-disaster need assessment report, 2024

աջակցության գումարների վերաբերյալ: Այսպես, ֆիզիկական անձանց վնասի փոխհատուցման ծրագրի շրջանակներում, ըստ Իջևանի համայնքապետարանի տրամադրած տեղեկատվության՝ ստացվել է 6 դիմում, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և փոխանցվել մարզպետի աշխատակազմ: Նոյեմբերյանի համայնքապետարանի տրամադրած տվյալների՝ աղետից հետո կազմվել է 362 դիմում-արձանագրություն, որից 15-ը վնասված տներ, 30-ը՝ վնասված մեքենաներ, 15-ը՝ իրավաբանական անձիք, 126-ը՝ օժանդակ շինություն, 227-ը՝ գյուղատնտեսական այգիներ: Դիվիզանից առհասարակ տեղեկատվություն չի ստացվել:

Այս ծրագրի շրջանակներում փոխհատուցվել են նաև տրանսպորտային միջոցներին հասցված վնասները: Վնասվածության աստիճանը և դրա հիման վրա փոխհատուցման ենթակա գումարի չափը հաստատվել է ապահովագրական ոլորտում (ԱՊՊԱ) շարժական գույքին պատճառված վնասները գնահատող թվով երկու որակավորված փորձագիտական կազմակերպությունների կողմից կատարված փորձաքննության արդյունքում տրված եզրակացությամբ:

Ընդհանուր առմամբ աղետի հետևանքով վնասվել է **161** տրանսպորտային միջոց, որոնք 100%-ով հանդիսացել են մասնավոր գույք, իսկ վնասի չափը գնահատվել է **0,99 մլն ԱՄՆ դոլար**: Տավուշի մարզում ընդհանուր առմամբ վնասվել է **32** տրանսպորտային միջոց, որից 29-ին տրվել է **32,900,000 ՀՀ դրամ** ֆինանսական աջակցություն:

Ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցներին պատճառված վնասի փոխհատուցման նպատակով ՀՀ Լոռու և Տավուշի մարզպետների աշխատակազմերին հատկացվել է **135,021,400 ՀՀ դրամ**:

**Գծապատկեր 6.** Ֆիզիկական անձանց վնասի փոխհատուցման ՀՀ Կառավարության ծրագրի շրջանակներում իրականացրած հատկացումները ՀՀ Տավուշի և Լոռու մարզերին




Տրանսպորտային միջոցների փոխհատուցման ծրագրի կիրարկման հետ կապված, այդուհանդերձ, տեղի են ունեցել բազմաթիվ խնդիրներ: Ինչպես պարզ դարձավ այս ծրագրի շահառու հանդիսացող անձանց հետ ֆոկլու-խմբային քննարկումներից, վնասի գնահատման գործընթացը և այնուհետ՝ փոխհատուցման ենթակա գումարի սահմանումը էապես կախված է եղել այն հանգամանքից, թե հատկապես որ ԱՊՊԱ կազմակերպությունն է իրականացրել այն: Նույն մակնիշի մեքենայի համանման վնասի պարագայում ապահովագրական ընկերությունները փորձագիտությամբ սահմանել են փոխհատուցման էապես տարբերվող գումարներ: Որոշ դեպքերում այս ընկերությունները գործել են ոչ պրոֆեսիոնալ կերպով՝ շահառուներից պահանջելով մեքենայի վնասի մասին ապացույցները ներկայացնել լուսանկարներ տրամադրելով: Այս հանգամանքը թույլ չի տվել ամբողջությամբ գնահատել վնասի չափը, ինչի արդյունքում որոշ դեպքերում սահմանված փոխհատուցման գումարներից շահառուները առհասարակ հրաժարվել են օգտվել:

Տրանսպորտի բնագավառում գրանցված վնասները, անշուշտ, չեն սահմանափակվում բացառապես տրանսպորտային միջոցներին հասված վնասներով: Հեղեղումների արդյունքում մեծ ավերավածություններ են հասցվել նաև ենթակառուցվածքների՝ ճանապարհներ կամուրջներ, խմելու և ոռոգման ջրագծեր, հենապատեր և այլն: Ավելի լայն համատեքստում տրանսպորտի ոլորտին հեղեղումների թողած ազդեցությունը գնահատելիս հասցված վնասի և կորստի չափը կազմում է **33,2 մլն ԱՄՆ դոլար:**

Ամենամեծ վնասը հասցվել է ավտոմոբիլային կամուրջներին՝ 8,90 մլն ԱՄՆ դոլար, ավերվել է 7 ավտոմոբիլային կամուրջ, փլուզվել՝ 4-ը, սրանք այն կամուրջներն են, որոնք Դեբեդ գետի վրայով բնակավայրերը միացրել են M6 մայրուղուն: Փլուզվել կամ մասնակի ավերվել են նաև 8 ջրահեռացման կառույցներ, քանդվել կամ մասնակի վնասվել է 20 հետիոտնային կամուրջ,

**Գծապատկեր 7.** Տրանսպորտային ոլորտին հասցված վնասը՝ ըստ առանձին կատեգորիաների (ԱՄՆ դոլար)



Ազգային M6 մայրուղին 50 կմ երկարությամբ վնասվել է 30 հատվածներում (ընդհանուր 7,1 կմ), ազգային M4 մայրուղին 11 կմ երկարությամբ մասամբ վնասվել է 10 հատվածներում:

1,677մ հենապատ վնասվել է Մ6 ավտոճանապարհին, և 1156մ՝ Ալավերդի, Տաշիր և Դիլիջան համայնքներում: 50 կմ երկարությամբ հատվածում 2 կմ երկաթուղային գիծն ամբողջությամբ վնասվել է մի քանի վայրերում:

Տավուշի մարզում վնասվել է Խաշթառակ գյուղի կամուրջը և դեպի Խաշթառակ տանող այլընտրանքային 7,8կմ երկարությամբ ճանապարհը: Ըստ Իջևանի համայնքապետարանի տրամադրած տեղեկատվության՝ Խաշթառակ տանող ճանապարհը հաջողել է վերականգնել համայնքային բյուջեի միջոցներով (**9,300,000 ՀՀ դրամ**), մինչդեռ կամրջի վերականգնման աշխատանքները չեն իրականացվել, քանի որ նախագծման աշխատանքները ընթացքի մեջ են: Վնասվել է Այրումի կամուրջը՝ որտեղ նախատեսվում է տեղադրել ժամանակավոր մետաղական կամուրջ և Այրումի հետիոտնային կամուրջը, որը վերակառուցման համար ակնկալվում է Շվեդարիայի Կառավարության ֆինանսական աջակցությունը:

Վնասվել է նաև Դիլիջան քաղաքի Էմմա Ծատուրյան փողոցի սկզբնամասում տեղակայված հենապատը: Սույն հենապատի, ինչպես նաև՝ Խաշթառակի կամրջի ժամանակավոր կառուցման նպատակով ՀՀ Կառավարության կողմից հատկացվել է համապատասխանաբար **33,957,000 ՀՀ դրամ** և **41,424 ,000 ՀՀ դրամ** գումար:

Աղստև գետի խնդրահարույց հատվածների մաքրման և հակահեղեղային միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է **70,000,000 ՀՀ դրամ** գումար:

Այսպիսով՝ 2025թ. փետրվարի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում տրանսպորտի բնագավառում գրանցված վնասների վերականգնման նպատակով ՀՀ Կառավարության կողմից կատարված ծախսը կազմում է **178,281,000 ՀՀ դրամ**:

### **ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում տնտեսվարողներին աջակցության ծրագիր**

Աղետի գոտում տուժած տնտեսվարողների կրած վնասների գնահատման և բուն վճարման աշխատանքները կոորդինացրել է ՀՀ ԷՆ-ը՝ գնահատման գործընթացում համագործակցելով ՀՀ Պետեկամուտերի կոմիտեի և Քաղաքաշինության կոմիտեի հետ:

Որպես տուժած կողմ, ըստ կարգի, սահմանվել են համայնքներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և աղետից տուժած առևտրային կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև աղետից տուժած ձեռնարկատիրական գործունեության վայր հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) սեփականատերերը կամ սեփականության իրավունքի իրավատերերը, բացառությամբ՝

1. առևտրային գործունեություն իրականացնող կառույցներ (օրինակ՝ բանկեր, վարկային կազմակերպություններ, գրավատներ և ապահովագրական ընկերություններ,

արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպություններ, ներդրումային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր),

2. վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչներ,
3. հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից լիցենզավորված կազմակերպություններ, պետական մասնակցությամբ կազմակերպություններ, աջակցության ստանալու ամսաթվի դրությամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ ճանաչված տնտեսավարողներ և 2024թ. մայիսի 26-ի դրությամբ հաշվառումից հանված (լուծարված) կարգավիճակ ունեցող տնտեսավարողների:

Ընդ որում, բոլոր այն տնտեսավարողները, ովքեր հանդիսացել են աղետի հետևանքով աջակցության կամ փոխհատուցման այլ ծրագրերի շահառու, իրավասություն չեն ունեցել դիմելու այս ծրագրին:

Սահմանվել է տնտեսավարողներին պատճառված վնասի փոխհատուցման եռաստիճան համակարգ.

- ցածր (առավելագույնը՝ մինչև 5 մլն ՀՀ դրամ),
- միջին (առավելագույնը՝ մինչև 10 մլն ՀՀ դրամ),
- բարձր (առավելագույնը՝ մինչև 15 մլն ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով կրած վնասի աստիճանը:

Բիզնես ոլորտին հասցված ընդհանուր վնասը հաշվվել է **6,27 մլն ԱՄՆ դոլար**, համայնքներից ամենաշատը տուժել է Ալավերդին (**3,27 ԱՄՆ դոլար**), ամենաքիչը՝ Թումանյանը (**0,02 ԱՄՆ դոլար**):

ՀՀ ԷՆ-ը, ի պատասխան տեղեկատվության հարցման, տրամադրել է տեղեկություններ ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ.

1. Փոխհատուցման ծրագրից օգտվելու համար վնասված անշարժ գույքի սեփականատերերը պետք է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների հետ դիմելին **մեկ հայտով**: Միասնական հայտով դիմումների ներկայացումը հիմնականում ձախողվել է, քանի որ պարզվել է, որ անշարժ գույքի սեփականատերը և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտը որևէ ձևով չեն առնչվում միմյանց հետ կամ ունեն լարված փոխարաբերություններ կամ կողմերից մեկը գտնվում է երկրից դուրս և այլ:
2. Ծրագրի շահառուները փորձել են թաքցնել աջակցության այլ ծրագրից օգտվելու հանգամանքը՝ իմանալով, որ այդ դեպքում չեն կարող օգտվել ՀՀ Կառավարության 1301-Լ որոշմամբ սահմանված ծրագրից:
3. Շահառուների կողմից ներկայացված փաստաթղթերը ունեցել են բազմաթիվ թերություններ, օրինակ՝ ժամկետանց անձնագրեր կամ ID քարտեր, անհատույց օգտագործման կամ վարձակալության պայմանագրերի բացակայություն, դրմումով


չպահանջված և ոչ ակտիվ փաստաթղթերի ներառում, օրինակ՝ ամուսնության վկայական և այլն:

4. Շահառուների քանակի՝ գրեթե 50%-ից ավելի դեպքերում բանկային հաշվեհամարի ստուգման համար անհրաժեշտ բանկային քաղվածքի պահանջելը հավելյալ երկարեցրել է ծրագրի իրականացման գործընթացը, քանի որ դրանք ուղարկվել են ուշացումով:
5. Հայտերը ներկայացվել են ծրագրով ֆիքսված ժամկետից ուշ, ինչի պատճառով դրանք չեն դիտարկվել:

Ընդհանուր առմամբ այս ծրագրի շրջանակներում ստացվել է **117 դիմում՝ 95-ը՝ Լոռուց, 22-ը՝ Տավուշից**: Տրամադրած աջակցության չափը Լոռու մարզում կազմել է **136,247,904 ՀՀ դրամ**, Տավուշում՝ **45,734,972 ՀՀ դրամ**, ընդամենը՝ **181,982,876 ՀՀ դրամ** ինչը հասցեագրում է ոլորտին հասցված վնասը մոտավորապես 29%-ով:

**Աղյուսակ 5.** ՀՀ Տավուշի մարզում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում տնտեսվարողների մասին ամփոփ տեղեկատվություն

| Մարզ   | Համայնք     | Դիմումների քանակ | Վնասվածության աստիճան | Աջակցություն    |
|--------|-------------|------------------|-----------------------|-----------------|
| Տավուշ | Նոյեմբերյան | 2                | բարձր                 | 2 800 000,00 ₼  |
|        |             | 4                | միջին                 | 14 630 581,00 ₼ |
|        |             | 2                | ցածր                  | 3 404 678,50 ₼  |
|        |             | 1                | Չի գնահատվել          | 200 000,00 ₼    |
| Տավուշ | Դիլիջան     | 6                | միջին                 | 11 393 080,00 ₼ |
|        |             | 4                | ցածր                  | 8 178 566,00 ₼  |
| Տավուշ | Այրում      | 1                | Այրում ցածր           | 1 145 637,00 ₼  |
|        |             | 1                | Այրում միջին          | 3 782 429,50 ₼  |
| Տավուշ | Հաղթանակ    | 1                | Հաղթանակ միջին        | 200 000,00 ₼    |



ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմից ստացված տեղեկատվության համաձայն մարզում տուժել է 30 տնտեսվարող՝ 15-ը՝ Նոյեմբերյանում, 10-ը՝ Դիլիջանում, 5-ը՝ Իջևանում, սա նշանակում է, որ առնվազն 8 դիմում-հայտ առնվազն չի հաշվառվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից:

Ֆոկուս-խմբային քննարկման ընթացքում Իջևանի և Այրումի տնտեսվարողները մատնանշել են գնահատման գործընթացին ուղեկցող մի շարք խնդիրների մասին: Ամենատարբեր գերատեսչությունների կողմից բիզնեսների վնասների գնահատման աշխատանքները ամփոփելուց հետո, որոնք, ըստ տնտեսվարողների հաճախ իրականացվել է մակերեսորեն, փոխհատուցման դիմումները ներկայացվել են ՀՀ ԷՆ, որից հետ նրանց դիմումների ընթացքի վերաբերյալ հետադարձ տեղեկատվություն չի տրամադրվել: Համայնքային իշխանությունների պարզաբանումներով խնդիրը պայմանավորվել է դիմումների՝ սահմանված ժամկետներից ուշ ներկայացման հանգամանքով: Որոշակի անճշտություններ են եղել նաև բիզնես տարածքների նկատմամբ տնտեսվարողների սեփականության իրավունքի հետ կապված: Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում չի հաջողել համապարփակ տեղեկատվություն ստանալ իրավական խնդիրներով պայմանավորված դիմումների մերժման դեպքերի վերաբերյալ, ինչը լրացուցիչ, առավել խորքային ուսումնասիրությունների առարկա է:

Դիմումների կրկնակի ներկայացման հարցադրմանը ի պատասխան և՛ համայնքային իշխանությունները, և՛ բիզնեսները կասկած են հայտնել, որ բիզնես ոլորտի վնասների փոխհատուցումը, այնուամենայնիվ, անհնարին է, քանի որ խոսքը առավել խոշոր ծավալի վնասների մասին է: Բացի այդ ուսումնասիրության արդյունքները մատնանշում են առավելապես այս ծրագրի շահառուների շրջանում թույլ իրազեկվածություն ծրագրի ընթացակարգերի վերաբերյալ: Տուժած տնտեսվարողները դժգոհություններ են հայտնել գործընթացների ոչ թափանցիկ լինելու մասին, խնդիր է եղել նաև պետական մարմինների կողմից ոչ բավարար աջակցության տրամադրումը:


Բիզնեսների խոցելիությունը արտակարգ իրավիճակներով պայմանավորված աղետներին և ինքնուրույն կերպով հետևանքներին դիմագրավելու պատրաստվածության պակասը մեկ այլ համակարգային խնդրին կարելի է վերագրել՝ մարզերում չկա բիզնես միջավայրի ապահովագրման ձևավորված մշակույթ: Բիզնես միջավայրի ապահովագրման միջազգային լավագույն փորձը մատնանշում է, որ մասնավոր բիզնեսի ռիսկերի կառավարման պատասխանատուն պետք է լինի հենց ինքը՝ բիզնեսը, մինչդեռ պետության դերակատարումը պետք է սահմանափակվի բիզնեսի համար նպաստավոր և անվտանգ միջավայրի ձևավորմամբ, բիզնես նպատակներով օգտագործվող տարածքների ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ, ստանդարտների սահմանմամբ և այլն: Իհարկե, չկա փաստահենք տեղեկատվություն, թե վնասներ կրած բիզնեսների քանի՞ տոկոսն է իր բիզնեսը վարել շահագործման համար նախատեսված տարածքներում, քանի՞ տոկոսն է թաքցրել իր

իրական եկամուտները և աշխատել օրինական դաշտում, սակայն չի կարելի բացառել պետության բացթողումների ու բիզնեսների կրած վնասների միջև փոխկապվածությունը:

**ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում, բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման ծրագիր**

Սույն ծրագիրը միտված է եղել անկաճ կամ կորսված գյուղատնտեսական կենդանիներին, ոչնչացված կամ կորսված կամ վնասված պտղատու ծառերին, հատապտղի թփերին ու ցանքատարածություններին քաղաքացիների հասցված վնասի փոխհատուցմանը: Գյուղատնտեսության ոլորտին հասցված աղետի ազդեցությունը գնահատվել է **19,15 մլն ԱՄՆ դոլար**, որից՝ **12,12 ԱՄՆ դոլարը** կազմել է վնասը, **7,03 մլն ԱՄՆ դոլարը՝** կորուստը:

**Գծապատկեր 8.** Գյուղատնտեսության ոլորտում գրանցված վնասը և կորուստը ըստ համայնքների (ԱՄՆ մլն դոլար)



Այս ծրագրով փոխհատուցումը նախատեսվել է այն ֆիզիկական և իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, ովքեր ունեն:

1. Հաշվառված տնտեսություններ՝ խոշոր եղջերավոր անասուններ, ծիածանափայլ իշխանի արտադրություն (առանձին կանոններով):
2. Չհաշվառված տնտեսություններ, բայց համայնքային հանձնաժողովների կողմից հաստատված վնասներ:
3. Տնամերձ հողամասեր ունեցող անձինք, որոնց հողում ոչնչացվել կամ վնասվել են պտղատու ծառեր, հատապտղի թփեր, ցանքատարածություններ:
4. Գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող կամ օգտագործող անձինք, որոնց հողերում վնասներ են գրանցվել:

5. Սեփականության իրավունք չունեցող, բայց համայնքի ղեկավարի կողմից վավերացված հողօգտագործողներ, ովքեր վնասներ են կրել:

Փոխհատուցման գումարի չափը կախված է շահառուի կարգավիճակից կազմել է.

1. Հաշվառված տնտեսություններին՝ 100% փոխհատուցում,
2. Չհաշվառված տնտեսություններին՝ 50% փոխհատուցում,
3. Տնամերձ հողերի համար՝ 150,000 դրամ,
4. Գյուղատնտեսական նշանակության հողատերերին՝ 100% փոխհատուցում
5. Սեփականության իրավունք չունեցող հողօգտագործողներին՝ 30% փոխհատուցում

Ըստ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տրամադրած տվյալների մարզում տուժել է 307 գյուղացիական տնտեսություն, որից 292-ը՝ Նոյեմբերյան համայնքում, 15-ը՝ Դիլիջան համայնքում, որոնց փոխհատուցման նպատակով հատկացված գումարը կազմել է **48,665,000 ՀՀ դրամ**:

Վնասվել է 20,7 հազար ծառ, 278 թռչուն, 60 գլուխ խոզ ու խոճկոր, 74 մեղվափեթակ, 8 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Այս ծրագրից շահառուները ընդհանուր առմամբ ֆոկլուս-խմբային քննարկումների ժամանակ արտահայտել են իրենց գոհունակությունը ծրագրի կառավարման որակից: Շատերը մատնանշել են, որ թերահավատ են եղել առհասարակ որևէ փոխհատուցում ստանալու վերաբերյալ: Այս ծրագրի իրականացման հաջողության մեջ շատերը մատնանշել են հատկապես համայնքային իշխանությունների դերակատարումը: 2025թ. գարնանը, ծառերի ծաղկման շրջանում ակնկալվում է գնահատման նոր փուլ՝ հասկանալու, թե որ ծառատեսակներն ու մշակաբույսերն են ենթակա չվերականգնման:

## Առաջարկություններ ՏԿԵՆ-ին

**Խնդիր 1.** Աղետների ռիսկի կառավարման, ինչպես նաև՝ աղետի ազդեցության մեղմման համատեքստում առաձնակի կարևորություն ունի պետության կողմից ռիսկերի վաղաժամ բացահայտման կարողությունը, մինչդեռ 2024թ. մայիսյան հեղեղումները ակնհայտ դարձրեցին, որ աղետի գոտու վերածված համայնքներից մեծամասնությունը ապահովված չի եղել վաղ նախազգուշացման համակարգերով:

**Առաջարկություն 1.1** ՀՀ ՆԳՆ-ի և Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչության և ոլորտով հետաքրքրված միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ նախաձեռնել Հայաստանի բոլոր 71 համայնքներում վաղ նախազգուշացման համակարգերի ներդրումը:

**Խնդիր 2.** Ներկա օրենսդրական կարգավորումներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինները սեփական լիազորությունների շրջանակում չունեն աղետների ռիսկի բացահայտման, կանխման, մեղմման, ինչպես նաև՝ կանխարգելման ոլորտներում աշխատանք իրականացնելու իրավասություն:

**Առաջարկություն 2.1** Օրենսդրական կարգավորումներով ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը, նրանց վերապահել բոլոր տեսակի բնածին ու տեխնածին աղետների և այլ արտակարգ ու ճգնաժամային իրավիճակներում աղետների ռիսկի կառավարման գլխավոր դերակատարությունը: Վարչական լիազորությունների ընդլայնումը զուգակցել ֆինանսական լիազորությունների ապակենտրոնացմամբ, ինչը հնարավորություն կտա աղետների կառավարման գործընթացը դնել կենսունակ հիմքերի վրա:

**Առաջարկություն 2.2** ՀՀ Կառավարության հետ համագործակցությամբ սահմանել տարեկան կտրվածքով համայնքներին տրամադրվող ֆինանսական միջոցների ծավալը, որը ուղղված կլինի աղետների ռիսկի կառավարմանը՝ հատկապես աղետների վաղ կանխարգելմանն ու բացահայտմանը: Օրինակ, լուծումներից մեկը կարող է լինել համայնքներում սենսորային համակարգերի տեղադրումը, ինչը թույլ կտա չափել տեղումների քանակը, գետերի ջրի մակարդակը և այլ ցուցանիշներ՝ ռիսկերի վաղ բացահայտման համար:

**Խնդիր 3.** Համայնքների մոտ բացակայում է բնական աղետների՝ որպես համայնքին սպառնացող հնարավոր վտանգի խորքային գիտակցումը:

**Առաջարկություն 3.** Համայնքապետարանի աշխատակիցների, հանրային ծառայողների համար իրականացվող վերապատրաստումների պետական ծրագրում ներդնել աղետների պատրաստվածության վերաբերյալ բլոկները, որոնք հնարավորություն կտան բարելավելու կենսաձին և տեխնաձին աղետների, դրանցով պայմանավորված հետևանքների վերաբերյալ գիտելիքները:

## **Առաջարկություններ ՀՀ Կառավարությանը**

**Խնդիր 4.** Աղետի հրատապ և երկարաժամկետ կառավարման և աղետի հետևանքների վերացման համար ներգրավվում են բազմազան պետական հաստատություններ, որոնք առանձին գործառույթներ են իրականացնում, ինչը հաճախ խոչընդոտում է ինչպես կառավարման արագությանը և կարիքների գնահատմանը, այնպես էլ կատարվող և կատարված աշխատանքների մասին հանրային իրազեկմանը և միջգերատեսչական իրազեկմանը:

**Առաջարկություն 4.** Աղետների կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, ինչպիսին կարող է լինել պայմանական անվանումով «աղետի հետևանքների վերացման» հանձնաժողովը (հանձնախումբ, կոմիտե և այլն): Այդպիսի կառավարման համար հարկավոր է աղետների հետևանքների վերացման աշխատանքներին հանձնաժողովի գործունեությունը սահմանել օրենքով որպես համընդհանուր ստանդարտ, ենթաօրենսդրական և այլ իրավական ակտերով օժտել համապատասխան լիազորություններով:

**Խնդիր 5.** Տեղական ինքնակառավարման մարմինները գործող իրավակարգավորումներով այս աղետի դեպքում չնչին դերակատարություն են ունեցել աղետի կառավարման և հետևանքների վերացման գործում: Այդ հանգամանքը բարդացրել է աշխատանքների օպերատիվությունը և արդյունավետությունը: Տեղական ինքնակառավարման մարմինները համայնքային վնասների կառավարման հարցում երկրորդական դերակատարություն են ունեցել լիազորությունների ծայրահեղ սահմանափակության բերումով:

**Առաջարկություն 5.** Աղետների կանխարգելման և կառավարման արդյունավետության համար առաջարկվում է ավելի մեծ դերակատարություն վերապահել տեղական ինքնակառավարման մարմիններին, օրենսդրությամբ ավելի մեծ լիազորություններ և միջոցներ ապահովել ինչպես համայնքային մակարդակում խնդիրների ուռուցումնասիրությունների, կանխարգելիչ աշխատանքների, այնպես էլ աղետների հետևանքների և քաղաքացիներին ցուցաբերվող օժանդակությունների համար:

## Առաջարկություններ տեղական ինքնակառավարման մարմիններին

**Խնդիր 6.** Աղետին նախորդող տարիներին չեն ձեռնարկվել աղետների վտանգի կանխման և կանխարգելման համալիր միջոցառումներ, չեն ներդրվել աղետների կառավարման համակարգեր, օրինակ՝ համակարգված ձևաչափով սելավատարերի մաքրման աշխատանքների իրականացում կամ սելավ առաջացնող տարածքների պահպանում:

**Առաջարկություն 6.1** Համայնքի հնգամյա զարգացման պլաններով, տարեկան աշխատանքային պլաններով և տարեկան բյուջեներով հատկացնել նպատակային դրամական ֆոնդեր՝ սելավատարերի մաքրման աշխատանքների իրականացում կամ սելավ առաջացնող տարածքների պահպանման նպատակով:

**Առաջարկություն 6.2** Համայնքապետարաններում ներդնել GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) տեխնոլոգիաներ՝ աղետների ռիսկի քարտեզագրում իրականացնելու և հնարավոր հետևանքները կանխատեսելու համար:

**Խնդիր 7.** Համայնքային բյուջեի ընդհանուր կառուցվածքում ընդամենը 5% է նախատեսված արտակարգ իրավիճակների կառավարման համար:

**Առաջարկություն 7.** Տարեկան բյուջեն պլանավորելիս աղետների ռիսկի կառավարման համար նախատեսված ծախսը սահմանել ուսումնասիրելով համայնքի և նրանում ներառված բնակավայրերի խոցելիությունը ամենատարբեր տեսակի բնական ու տեխնոլոգիական աղետներին: Սեփական միջոցների անբավարար լինելու պարագայում դիմել պետական սուբսիդավորմանը, որպես ֆինանսավորման աղբյուր կարող են ծառայել նաև միջազգային դոնորական համայնքը:

**Խնդիր 8.** Համայնքները թեպետ ունեն աղետների ռիսկի կառավարման պլաններ, սակայն դրանք մեծիմասամբ ձևական բնույթ են կրում, քանի որ համայնքներում բացակայում են արագ արձագանքման փորձարկված մեխանիզմները, համայնքային կառավարման հիմքում չի դրվում համայնքի և/կամ նրանում ներառված բնակավայրերի առանձին աղետների նկատմամբ խոցելիության գնահատումը:

**Առաջարկություն 8.1** Համայնքի գոտիավորման, տարածքային պլանավորման գործընթացները կազմակերպելիս՝ շինթույլտվություններ տարամադրելիս, ճանապարհաշինարարական աշխատանքներ իրականացնելիս կամ աղբահանության համար տարածքներ հատկացնելիս մշակել բնական և տեխնոլոգիական վտանգների ռիսկի

մոդելավորման սցենարներ, որոնք կարող են զսպել կամ կանխարգելել այդ աշխատանքների իրականացումով պայմանավորված հնարավոր աղետների առաջացումը:

**Առաջարկություն 8.2** Վերանայել սելավատարերի, գետափնյա տարածքների, հողերի օգտագործման և կառուցապատման քաղաքականությունները՝ սահմանափակելով բարձր ռիսկայնություն ունեցող գոտիներում շինությունների կառուցումը:

**Առաջարկություն 8.3** Նախաձեռնել համայնքներում աղետների ռիսկի կառավարման խորհուրդների (ԱՌԿԽ) ձևավորմանը, որոնցում ներգրավված կլինեն համայնքապետարանի բոլոր ստորաբաժանումներից ներկայացուցիչներ, ավագանու անդամներից, վարչական ղեկավարներից և այլ ոլորտային պատասխանատուներից: Իրականացվել ԱՌԿԽ-ի պարբերաբար ուսուցումներ, վերապատրաստումներ՝ զինելով աղետներին արագ արձագանքման անհրաժեշտ հմտություններով: Զուգահեռաբար համայնքներում ձևավորել համայնքի բնակիչներից կազմված արագ արձագանքման կամավորական թիմեր:

**Խնդիր 9.** Հետադետային կարիքների գնահատման փուլում արձանագրած ամենամեծ մարտահրավերը եղել է ուսումնասիրվող գրեթե բոլոր ոլորտներում ելակետային տվյալների բացակայությունը, ինչը հնարավորություն չի տվել որակյալ ձևով իրականացնել վնասների և կորուստների գնահատում:

**Առաջարկություն 9.1** Ստեղծել աղետների ռիսկի կառավարման տվյալների համայնքային շտեմարան, որը կներառի բնակչության, անշարժ գույքի, ենթակառուցվածքների, բիզնեսների և գյուղատնտեսական ռեսուրսների վերաբերյալ մանրամասն տվյալներ: Այս աշխատանքների իրականացման համար ձևավորել և վերապատրաստել աղետների կառավարման հանձնաժողովներ, որոնք կներգրավվեն տվյալների հավաքագրման, վերլուծության և արձագանքման գործընթացներում: Սույն աշխատանքների իրականացումը մրցութային կարգով հնարավոր է արտապատվիրակել նաև այլ մասնագիտացված կազմակերպությունների:

**Խնդիր 10.** Գրանցվել է ջրհեղեղով պայմանավորված աղետի շրջանակներում իրականացրած սոցիալական աջակցության և փոխհատուցման ծրագրերի թափանցիկության ցածր մակարդակ:

**Առաջարկություն 10.1** Մշակել համայնքապետարանների հաղորդակցության ռազմավարություններ, որտեղ առանձին ենթաբաժիններով կներկայացվեն արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում համայնքային հաղորդակցության պլանները: Արտակարգ իրավիճակներում պրոակտիվ կերպով հրապարակել աջակցության ծրագրերի մանրամասներ՝ շահառուների թիվ, բաշխվածություն և ծախսումներ:

**Առաջարկություն 10.2** Հետադետային ժամանակահատվածում կազմակերպել հանրային քննարկումներ՝ բարելավելու ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությունն ու հասցեականությունը:

**Խնդիր 11.** Հետադետային կարիքների գույքագրման և գնահատման համար ինչպես համայնքային, այնպես էլ՝ ազգային մակարդակում, նկատվել է համապատասխան մասնագետների զգալի պակաս:

**Առաջարկություն 11.1** Ձևավորել համայնքային փորձագիտական խմբեր, որոնք կներառեն ճարտարագետներ, բնապահպաններ, GIS մասնագետներ, ճգնաժամային կառավարման մասնագետներ, հոգեբաններ, ովքեր կարող են աջակցել աղետների կանխարգելման և գնահատման աշխատանքներին: Պարբերական վերապատրաստման ծրագրերով այդ մասնագիտական խմբերի համար ապահովել պատշաճ վերապատրաստումներ և վերաորակումներ:

**Առաջարկություն 11.2** Համայնքներում խթանել աղետների կառավարման ոլորտում մասնագիտացած մասնագետների ներգրավումը՝ տեղական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրեր իրականացնելով:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին 4 հուլիսի 2024թ. N 1033 – Լ որոշում
2. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին 4 հուլիսի 2024թ. N 1043 – Ն որոշում
3. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում տնտեսվարողներին աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին 15 օգոստոսի 2024թ. N 1301-Լ որոշում
4. ՀՀ Կառավարության 4 հուլիսի 2024թ. N 1033 – Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ անելու մասին 15 օգոստոսի 2024թ. N 1298 – Լ որոշում
5. «Աղետների ռիսկի կառավարման 2023-2030թթ. ՀՀ Ռազմավարություն»
6. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
7. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք
8. «Հայաստանում ջրհեղեղի հետադետային կարիքների գնահատում» զեկույց, հեղինակ՝ Կրունոսլավ Կատիչ, 2024թ.
9. Armenia floods, may 2024, post-disaster need assessment report, 2024
10. Ավագանու և համայնքապետի որոշումներ
11. Տեղեկատվության հարցումներ

